1 հոկտեմբերի 2020 թվականի N 1618 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 608-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 23-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՊԱՐԿ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 608-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 11-րդ կետի «ԱՏԳԱԱ ծածկագիրը» սյունակի «9508900000» ծածկագիրը փոխարինել «9506999000» ծածկագրով.

2) 24-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակի «Santa Maria» բառերը փոխարինել «Santa Maria Swingboat» բառերով, «Քանակը» սյունակի «15 500» թիվը՝ «25 000» թվով, իսկ «Արժեքը» սյունակի «247 000 000» թիվը՝ «260 000 000» թվով.

3) 36-րդ կետի «Քանակը» սյունակի «16 500» թիվը փոխարինել «25 000» թվով, իսկ Արժեքը» սյունակի «243 500 000» թիվը՝ «270 000 000» թվով.

4) հավելվածը 61-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 62-66-րդ կետերով՝

«62.	9405401008	Դրսի էլ. լուսատուներ led լամպերով	Դրսի էլ. լուսատուներ led լամպերով, մետաղական հիմքով "funled", 320w	կգ	800	Իտալիա	26 000 000
63.	9405403908	Պլ. էլ. լուսատուներ՝ led լամպերով	Պլ. էլ. լուսատուներ՝ led լամպերով, ատրակցիոնի համար	կգ	200	Իտալիա	7 500 000
64.	9405920008	Լուսատուների պլաստ. մասեր՝ փոխովի գլխիկներով	Լուսատուների պլաստ. մասեր՝ փոխովի գլխիկներով	կգ	200	Իտալիա	1 406 000
65.	8504318007	Էլ. լուսատուների հոսանքի փոխակերպիչներ	Էլ. լուսատուների հոսանքի փոխակերպիչ-ներ՝ 480w հզորությամբ	կգ/ հատ	75 / 24	Իտալիա	1 540 000
66.	6702900000	Արհեստական ծառերի, ծաղիկների, թփերի տեսականի	Արհեստական ծառերի, ծաղիկների, թփերի տեսականի	կգ	7 300	Իտալիա	155 000 000».

5) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «8 951 736 000» թիվը փոխարինել «9 182 682 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ